

դարձած Պոլիս՝ մայրական խնամք ու դուրսդուրանք սկսաւ նորէն տեսնել:

Աւթօլը չկրցաւ թօթափել երբեք՝ հակառակ մօրը բոլոր ջանքերուն, սաստիկ, ու աղերսանքին: Ու ինքը կը պատմէր, թէ արդէն 40-45 տարու մարդ, ծեծ կ'ուտէր իր մայրիկէն, երբ գինով, զգայազիրկ տուն կ'երթար գիշերները, կրցած չըլլալով իր կամքին տէրը մնալ:

Ու խոցոտ սրտով կը պատմէր դարձեալ ինքը, թէ 1915-ի ամբան գիշեր մը, երբ դարձեալ անդգայ մտաւ տուն՝ հարուած ստացաւ իր բարի մայրիկէն, ու ըսաւ դառնացած.

«Զիս տանին մեռցնեն որպէսզի մէյ մըն ալ չծեծես»:

Ողջի խայթը կը կրծէր ներսիդին, երբ պատկերը կը վերյիշէր ինք:

Արդարեւ, — ո՛վ սեւ նախազգացում, — այդ գիշերն իսկ բռնեցին աքսոր տարին զինքը, ու աքսորէ դարձին՝ մայրիկը չկար: Ան էր հողը մտեր:

Ու այս տէրվիչ մարդը սակայն ինքզինք խնամելու, իր կեանքին ու առողջութեան հոգ տանելու տարօրինակ վայրկեաններ ունէր յաճախ: Մահուան սարսափը երբեմն կը սարսափեցնէր զինքը, մանաւանդ երբ ծանր անկողին իյնար. ու կը սկսէր դարմանի, զգուշութեան, ռեժիմի: Ո՛ւր էր երէկուան անփոյթ ու անտարբեր մարդը. հիմա կը դողար կեանքին վրայ, անոր ամէն մէկ կաթիլին վրայ. նոյնիսկ պահ մը օդին կը ձգէր, յետոյ քիչ քիչ միւրը՝ ճրելու համար դարձեալ:

* * *

Եւ վերջապէս Օտեանի մէջ ուրիշ երկու ներհակ գիծեր ալ կային: Կալան էր նախ, մանաւանդ երբ կարգին կ'ըլլար իր տրամադրութիւնը: Կը ծախսէր, եթէ ոչ չղայլօրէն, գոնէ առատ: Բայց իր մէջ կար նաեւ նրբահաշիւ մարդը: Մանաւանդ երբ խնդիրը կը դառնար իր ստանալիք վարձատրութեանը վրայ: Ու շատ ալ անբնական թուելու չէ ան: Օտեան իր գրչին ծայրովը կ'ապրէր:

Մարդ մը որ իր ընտանեկան կապերուն շնորհիւ կրնար բարեկեցիկ կեանք մը ապահովել, ապաւինած էր միայն իր գրչին: Ու մինչ հայ գրողներէն շատերը քծինքի, հացկատա-

կութեան ձեւերը գիտեն ապրելու համար, եւ խմբագիրներ կան, որոնց հացին իւղ կը քսէ շանթաժը, Օտեան միմիայն կը գրէր ու կ'ապրէր: Կ'ուզէր, որ իր ամէն մէկ գրածը վարձատրուի: Ու արդէն չէր գրեր առանց նախապէս գիտնալու, թէ ինչ գին պիտի տրուի իր աշխատանքին: Այդպէս է գրած նոյնիսկ իր գլուխ-գործոցները: Զէ գրած առանց հարկադրանքի, ինքնաբերաբար, գրելու սիրոյն: Թուղթ ու գրիչ առած է երբ պէտքը զգացած է գրամին:

Հայ լրագրագետներու ամենէն ժլատին՝ Իւլզանդ Քէչեանի հետ սակարկութիւններէ յետոյ է, որ Օտեան գրած է Ընկեր Փանջունիի անմահ նամականին:

Եւ մինչդեռ ուրիշ հեղինակներ կամ նազով կը վերցնեն իրենց վարձատրութիւնը եւ կամ աղերսանքով, ինքը կուգար կը ստանար Պանքէն չէք մը գանձողի պաղարկանութեամբ:

«Տեսնուինք», — այս կ'ըլլար իր առաջին եւ վերջին խօսքը, — պահանջն ու շնորհակալութիւնը:

Հակառակ ատոր՝ անտարբեր դառնաւ է իր թատերախաղերուն հեղինակի իրաւունքին մասին: Հարիւրաւոր անգամներ բեմադրած են «Չարչըրը»ն, առանց հեղինակներուն խաթրը հարցնելու: Անգամ մը միայն Օտեան տեղէ մը դրամ ստացած է իրբեւ հեղինակի իրաւունք:

«Յիմա՛րը», — կը կրկնէր շարունակ Օտեան:

ԻՐ ԶԱՆՐԱՅԻՆ ՄԱՐԴ

Օտեան հանրային գործիչ մը չէր՝ բացառութեան մեր մէջ հասկցուած իմաստովը: Ան, իր գրողի եւ հրապարակագրի աշխատանքէն դատ, խորապէս չէր մասնակցեր հանրային գործերու: Այսուհանդերձ ան ստանձնած է հանրային գանաղան պատուակալ պաշտօններ, ինչպէս Աղդային Ժողովի անդամակցութիւն, նախագահութիւն Հայ խմբագիրներու Միութեան, Հայ Թատերական Միութեան, Հայ Արուեստի Տան, եւ նաեւ երբեմն անգամակցած քաղաքական կուսակցութեանց:

Ինչպէս տեղ մը յիշեցի՝ Օտեան «Հայրենիք»ի մէջ Արփիարի գործակցած ատեն, պահ մը խառնուած է Հնչակեաններուն: Կարճատեւ եղած է այդ կապը, եւ անկէ յետոյ Օտեան հե-